ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1962 Общественные науки

Ռ. Կ. Հովհաննիսյան

# ՇԱՂԿԱՊԱՎՈՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Հին հայերենի նյութի հիման վրա)

*Յուրաքանչյուր բարդ ստորադասական նախադասություն բաղկացած է միմյանց նկատմամբ ոչ համազոր մասերից՝ գլխավոր և երկրորդական նախադասություններից, որոնց միջև գոյություն ունեն շարահյուսական զանազան հարաբերություններ։ Այսպես, օրինակ՝ բարդ ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս մասերը իրար նկատմամբ կարող են լինել ժամանակային, նպատակային, պատճառական և այլ հարաբերությունների մեջ։*

*Բարդ ստորադասական նախադասության գերադաս մասի և ուղիղ խնդիր պաշտոնով հանդես եկող ստորադաս մասի միջև հիմնական և որոշող հարաբերությունը գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերությունն է։ Գործողության և օբյեկտի շարահյուսական այդ հարաբերությունը, ինչպես նաև գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցությունը, իրականանում է երկու եղանակով.*

*ա) առանց կապակցական բառերի, այսինքն՝ հաջորդականության քերականական կապի և ինտոնացիայի շնորհիվ,*

*բ) որևէ կապակցական բառի միջոցով։*

*Կապակցության առաջին եղանակը Մ. Աբեղյանը անվանում է շարահարություն, իսկ երկրորդը՝ զոդված։*

*Մեր սույն հետազոտության նյութն է հանդիսանում գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերության իրականացման, այսինքն՝ ուղիղ խնդիր երկրորդական նախադասության և բարդ ստորադասական նախադասության գերադաս մասի կապակցության երկրորդ եղանակը։*

*Հիմք ընդունելով բարդ ստորադասական նախադասության մեջ գործողության և երկրորդական նախադասությամբ արտահայտված ծավալուն օբյեկտի շարահյուսական հարաբերությունն իրականացնող կապակցական բառերի խոսքի մասային պատկանելությունը՝ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները ընդհանրապես բաժանում են երկու խմբի.*

*1. Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ, որոնց կապակցությունը գերադաս նախադասության հետ կատարվում է ստորադասական շաղկապների միջոցով։ Այդ նախադասությունները կոչվում են շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ։*

*2. Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ, որոնց ստորադասումը գլխավորին կատարվում է հարաբերական բառերի միջոցով։ Այդպիսի նախադասությունները ընդունված է անվանել հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններ։*

Ինչպես երևում է, ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների երկու հիմնական տեսակների առաջին էական տարբերությունը գերազանցապես կառուցվածքային է։ Սակայն, ինչպես հայտնի է, լեզվի մեջ սովորաբար կառուցվածքային յուրաքանչյուր տարբերակ ծառայում է որևէ որոշակի իմաստի կամ իմաստային հարաբերության որոշակի նրբերանգի արտահայտմանը։ Նշանակում է՝ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների երկու տեսակների կառուցվածքային տարբերությունը պայմանավորված է գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերության տարբերությամբ։ Ուստի տրամաբանորեն հարց է առաջանում, թե որո՞նք են շաղկապավոր և հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների արտահայտած իմաստները։ և իմաստային հարաբերությունների միջև գոյություն ունեցող այն ընդհանուր տարբերությունները, որ պայմանավորում են ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքային այդ երկու տեսակների առկայությունը։

Շաղկապավոր և հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները իրարից տարբերվում են՝

1. Բարդ ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս մասերի միջև եղած գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերության առաջին եզրի, այն է՝ գործողության ընդհանուր վերացական իմաստով.

2. Նույն շարահյուսական հարաբերության երկրորդ եզրի՝ օբյեկտի ընդհանուր իմաստով.

3. Հարաբերության արդյունքով, այսինքն՝ օբյեկտի վրա գործողության ունեցած ներգործության աստիճանով։

Քննենք սրանցից յուրաքանչյուրն առանձին։

Երբ բարդ ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս մասերի միջև եղած գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերությունը քննության ենք առնում հարաբերության առաջին եզրի՝ գործողության ընդհանուր իմաստի տեսանկյունից, նկատում ենք, որ այդ հարաբերությունը երկու տեսակ է լինում։

ա) Հոգեկան և մտավոր գործունեության հարաբերումը իր օբյեկտին.

օրինակ՝

«Ասասցուցմ, եթե զերախտաւորսն և զբարերարս մեք ոչ հրամայեմք անարգել...» (Եզն. 10—11)։ «Եւ Դանիէլ իբրև գիտաց՝ թէ կարգեցաւ հրամանն, եմուտ ի տուն իւր» (Դանիէլ, Զ, 10)։ «Պատմեաց մեզ Մեսրոպ, եթէ կատարումն արուեստիդ ի շնորհաց վերնոյն եղև...» (Խոր. 3-րդ, Մէ, 335)։ «Լուաւ Գրիգորիոս, թէ Վահէվանէան մեհեանն մնացեալ է...» (Ագաթ., ՃԺԴ, 809, 521)։

«Եւ զոր քո չար կամօքդ կամիս լսել յինէն, զայդ ես ասեմ քեզ» (Եղիշէ, 174)։ «Քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն» (Բուզ., 6-րդ, թ, 227)։ «Տուեալ ողջոյն և պատմեալ նոցա՝ որ ինչ միանգամայն եղեալ էր» (Ագաթ., ՃԺԴ, 804, 419)։

բ) Ֆիզիկական գործունեության հարաբերումը իր օբյեկտին.

օրինակ՝

«Դու հարեր զամենեսեան՝ ոյք էին ընդ իս թշնամութեամբ տարապարտուց...» (Սաղմ., գ, 8)։ «Եւ աստ ունի իշխանութիւն... կապել զամենեսեան,

որ կարդան զանուն քո» (Բորբ., Ի, 14)։ «Զոր դու շինեցեր՝ նոքա աւերեցին» (Սաղմ., Ժ, 4)։

Բերված օրինակներից երևում է, որ բարդ ստորադասական նախադասության գլխավոր և երկրորդական մասերի միջև գոյություն ունեցող հոգեկան և մտավոր գործունեության հարաբերումը օբյեկտին իրականանում է և՛ ստորադասական շաղկապների, և՛ հարաբերական բառերի միջոցով, իսկ ֆիզիկական գործունեության՝ երկրորդական նախադասությամբ արտահայտված օբյեկտը քերականորեն կարող է ձևավորվել միայն որպես հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն։

Նշանակում է՝ շաղկապավոր և հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները իրարից տարբերվում են իրենց խնդրառու բայի ընդհանուր վերացական իմաստով. շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների համար գլխավոր նախադասության մեջ որպես խնդրառու կարող է հանդես գալ միայն հոգեկան ու մտավոր գործունեության նշանակություն ունեցող բայով արտահայտված մի անդամ, այնինչ՝ հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների համար խնդրառու կարող է լինել և՛ հոգեկան ու մտավոր, և՛ ֆիզիկական գործունեություն արտահայտող որևէ բայ։

Շաղկապավոր և հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների խնդրառու բայերի տարբերակումը ըստ հոգեկան ու մտավոր և ֆիզիկական նշանակության, անշուշտ միանգամայն բացարձակ չպետք է համարել։ Այդ տարբերությունը որոշ իմաստով հարաբերական է հետևյալ պատճառներով.

ա) Եթե ներգործական սեռի բայերի մեծ մասը հեշտությամբ կարելի է դասել այդ երկու խմբերից որևէ մեկի մեջ, ապա կան ներգործական սեռի այնպիսի բայեր, որոնց հատկացնելը բայերի մեկ կամ մյուս խմբին առհասարակ դժվար է լինում։

բ) Կան ներգործական սեռի բայեր, որոնք կոնտեքստում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ստանում են մերթ ֆիզիկական, մերթ հոգեկան գործունեության նշանակություն։ Հատկանշականն այն է, որ այդպիսի բայերի իմաստի՝ կոնտեքստով պայմանավորված փոփոխությունը իր հետ բերում է նաև նրանց քննարկված խնդրառական հատկանիշների, հետևաբար և երկրորդական նախադասության կառուցվածքի փոփոխություն։ Ինչպես հայտնի է, գրել բայը իր մեջ ընդգրկում է և՛ ֆիզիկական (ձեռքի շարժումը, մկանների լարվածությունը և այլն), և՛ հոգեկան (մտավոր) գործունեության նշանակությունը։ Երբ տվյալ բայը կոնտեքստում գործածվում է մի բան գրի առնելու իմաստով, առավելապես ֆիզիկական գործունեություն արտահայտող բայ է, որի հետևանքով ձեռք է բերում բայերի այդ խմբին բնորոշ խնդրառական հատկանիշները և իր անմիջական օբյեկտը հանդիսացող ուղիղ խնդիր երկրորդական նախադասության հետ շարահյուսական հարաբերության մեջ է մտնում հարաբերական բառերի միջոցով։ Մեր այս մտքը պարզելու համար անհրաժեշտ ենք համարում որոշ օրինակներ բերել ժամանակակից հայերենից.

«Ուրիշի գրած տետրակների լուսանցքում երկրորդ անգամ Տիտոսը գրել էր այն, ինչ տետրակի տերն էր գրել լուսանցքում» (Բակունց, 41)։

Այստեղ գրել բայը գերազանցապես ունի ֆիզիկական գործունեության նշանակություն (գրի առնել) և հանդես է եկել որպես հարաբերական ուղիղ

խնդիր երկրորդական նախադասության խնդրառու։ Այդ բայը որպես շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասության խնդրառու կարող է հանդես գալ միայն այն դեպքում, երբ իմաստով համարժեք է ասացական բայերին, արտահայտում է գրավոր հաղորդելու, կարգադրելու իմաստ, այսինքն՝ առավելապես հոգեկան գործունեություն նշանակող բայ է. օրինակ՝

«Գրում էր, թե որպես նորընտիր Թեոդոս կայսրը հարգում է իրան...» (Ռաֆֆի, հ. 7, 386)։ «Գրում էր Մուշեղին, թե Շապուհի անձամբ արշավելը Հայաստան՝ իրան ևս սաստիկ հոգսերի մեջ էր դրել» (Ռաֆֆի, հ. 7, 390)։

Նշանակում է՝ որևէ բայի ֆիզիկական կամ հոգեկան իմաստ արտահայտելը որոշելու համար չպետք է սահմանափակվել միայն կոնտեքստից դուրս նրա ունեցած ընդհանուր բառիմաստով, այլ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել այն կոնկրետ նշանակությունը, որը ստացել է այդ բայը տվյալ գործածության մեջ, որով և պայմանավորվել է այդ բայ-ստորոգյալի համար որպես օբյեկտ ծառայող ուղիղ խնդիր երկրորդական նախադասության կառուցվածքը։

գ) Կան հոգեկան գործունեության (զգացմունքի) նշանակություն ունեցող մի շարք բայեր (սիրել, ատել), որոնց անմիջական օբյեկտը հանդիսացող երկրորդական նախադասությունները գլխավորի հետ մեծ մասամբ կապվում են հարաբերական բառերի միջոցով. օրինակ՝

«...Եթե սիրեցէք զայնոսիկ, որք սիրեն զձեզ, զինչ վարձք իցեն» (Մտթ. Ե, 46)։ «Ատեցեր զայնոսիկ որ զործեն զանօրէնութիւն» (Սաղմ., Ե, 7)։

Չնայած հոգեկան ու մտավոր և ֆիզիկական գործունեություն նշանակող բայերի տարբերության վերը նշված որոշ չափով հարաբերական բնույթին, այնուամենայնիվ շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների խնդրառուի դերով հանդես եկող հոգեկան ու մտավոր գործունեություն նշանակող բայերը կարելի է որոշակիորեն առանձնացնել հետևյալ խմբերի մեջ.

ա) Ասացական բայեր (verba dicendi), որոնք արտահայտում են ասելու, խոսելու, հաղորդելու, պատմելու գաղափար (ասեմ, պատմեմ, զրուցեմ և այլն)։

բ) Մտածական բայեր (verba putandi), որոնք արտահայտում են մտածելու, խորհելու գաղափար (մտածեմ, խորհիմ, զմտաւ ածեմ և այլն)։

գ) Զգայական ընկալում նշանակող բայեր (verba sentiendi)—տեսանեմ, լսեմ, զգամ։

դ) Իմացական բայեր (verba intelligendi), որոնք նշանակում են մարդու իմացական գործունեությունը (գիտեմ, իմանամ, ճանաչեմ)։

ե) Կամական բայեր (verba voluntatis), որոնք նշանակում են սուբյեկտի կամային գործունեությունն ու ցանկությունը։

Շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների խնդրառուի դերով կարող են հանդես գալ միայն վերը նշված խմբերի մեջ մտնող ներգործական սեռի բայերը։ Հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների համար որպես խնդրառու կարող են ծառայել բոլոր ներգործական սեռի բայերը։

Մինչև այժմ մենք շաղկապավոր և հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների տարբերությունը քննության էինք առնում գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերության առաջին եզրի՝ այդ

նախադասությունների խնդրառու բայերի, ընդհանուր իմաստի տեսանկյունով։ Այժմ անհրաժեշտ է այդ տարբերությունը քննության առնել հարաբերության երկրորդ եզրի՝ օբյեկտի, այսինքն՝ հենց երկրորդական նախադասության ընդհանուր իմաստի տեսանկյունով։

Գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերությունը իր երկրորդ եզրի՝ օբյեկտի, ընդհանուր իմաստի տեսակետից ևս երկու տեսակ է լինում։

ա) Գործողության հարաբերումը առարկայի (անձ կամ իր). օրինակ՝

«Եւ կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ» (Մարկ. Գ, 13)։

«Քանզի չհանէին վեր զոր ի սրտին խորհէին» (ՈՄՄ, 2-րդ, Դ, 451)։

«Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի» (Յայտն. Գ, 12)։

«Եւ այնուհետև սկսանէր սպարապետն Հայոց Մուշեղ հարկանէր զայնոսիկ՝ որք ապստամբ եղեն ի թագաւորութենէն Արշակունեաց» (Բուզ., 5-րդ, Ը, 175)։

բ) Գործողության հարաբերումը որպես օբյեկտ հանդես եկող մի այլ գործողության կամ վիճակի. օրինակ՝

«Գիտեմ, զի կին գեղեցիկ ես դու» (Մենդ., ԺԲ, 11)։

«...Աղաչեցին՝ զի մի խառնեսցեն զայն արծաթ ի զոհս կոոցն պաշտաման» (Բ. Մակար., Դ, 18)։ «Եւ որդիքն Ամոնայ տեսին՝ եթէ փախեան ասորիքն...» (Ա. Մնաց., ԺԹ, 19)։ «...մի գիտասցեն, թէ դու կին Յերոբովամայ իցես...» (Գ. Թագ., ԺԴ, 2)։

Համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին դեպքում գլխավոր նախադասությունների գործողությունների համար որպես օբյեկտներ հանդես են եկել առարկաներ (Կանչում էր իր կամեցածներին. վեր չէին հանում սրտում խորհածները, սյուն կդարձնեմ ճաղթողին. Մուշեղը խփում էր ապստամբներին), իսկ երկրորդ դեպքում գլխավոր նախադասության գործողությունը շարահյուսական հարաբերության մեջ է մտել երկրորդական նախադասությամբ արտահայտված մի այլ գործողության կամ վիճակի հետ (Գիտեմ քո գեղեցիկ կին լինելը. աղաչեցին չխառնել. տեսան ասորիների փախչելը. թող չիմանան քո Հերոբովամի կինը լինելը)։

Օրինակների համեմատությունից երևում է նաև, որ երբ գերադաս նախադասության գործողությունը շարահյուսական հարաբերության մեջ է գտնվում առարկայական իմաստ արտահայտող օբյեկտի հետ, տվյալ ծավալուն օբյեկտը բերականորեն ձևավորվում է որպես հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, իսկ գործողության կամ վիճակի իմաստ արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասության և գլխավոր նախադասության շարահյուսական կապակցությունը իրականանում է ստորադասական (բացատրական) շաղկապների միջոցով։

Նշանակում է՝ շաղկապավոր և հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները միմյանցից տարբերվում են նաև հենց իրենց արտահայտած ընհանուր իմաստով. շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը որպես օբյեկտ ընդհանուր առմամբ արտահայտում է գործողության կամ վիճակի իմաստ, իսկ հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը միշտ նշանակում է որպես օբյեկտ հանդես եկող որևէ առարկա (անձ կամ իր) կամ առարկայական հասկացություն։

Անհրաժեշտ է նշել, որ քննարկվող կարգի նախադասությունների միջև եղած հիշյալ կարգի իմաստային տարբերությունը պայմանավորված է նրանց խնդրառու բայերի ընդհանուր իմաստով։ Դժբախտաբար մինչև այժմ եղած

քերականական աշխատություններում հոգեկան ու մտավոր և ֆիզիկական գործունեություն նշանակող ներգործական բայերի խնդրառական հատկանիշների առանձնահատկությունների վրա չափազանց քիչ է ուշադրություն դարձվել։

Անշուշտ, ուղիղ խնդրի խնդրառուի դերով հանդես եկող ներգործական սեռի բայի՝ հոգեկան թե ֆիզիկական նշանակություն ունենալը ուղիղ խնդրի հոլովառության տեսակետից իրերի դրությունը մազաչափ անգամ չի փոխում, քանի որ, անկախ խնդրառու բայի իմաստից, ուղիղ խնդիրը միշտ ձևավորվում է հայցական հոլովով։ Բայց այդ նույնը չի կարելի ասել ուղիղ խնդրի խոսքի մասային արտահայտության տեսակետից։ Այս կետում արդեն հոգեկան ու ֆիզիկական գործունեություն արտահայտող բայերը հանդես են բերում խնդրառական հատկանիշների զգալի տարբերություններ։ Ֆիզիկական գործունեության նշանակություն ունեցող ներգործական սեռի բայերի համար որպես գործողության անմիջական օբյեկտ կարող են հանդես գալ միայն առարկաներն ու առարկայական հասկացությունները, իսկ որևէ եղելություն, գործողություն կամ վիճակ չի կարող այդ բայերով արտահայտված գործողության համար ծառայել որպես անմիջական օբյեկտ։ Այլ կերպ ասած՝ ֆիզիկական գործունեություն արտահայտող բայերի ուղիղ խնդիրը միշտ արտահայտվում է որևէ անվանական խոսքի մասով (գոյական, ածական, թվական, դերանուն), կամ անվանական կիրառությամբ հանդես եկող հարակատար ու ենթակայական դերբայներով, իսկ անորոշ դերբայը իր հիմնական՝ գործողության կամ եղելության ընդհանուր գաղափարի նշանակությամբ չի կարող այդ բայերի մոտ հանդես գալ որպես ուղիղ խնդիր։ Օրինակ՝

«Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին, զփայտակերտն և զքարակերտ քանդեցին, զպարիսպն ապականեցին» (Բուզ., 4-րդ, Ծ, 1832, 171—172)։ «Տրդատ և... Գրիգորիոս հանդերձեցին և արձակեցին զԱրիսաակես.. » (Ագաթ., ՃԻԵ, 887, 455)։ «Զաշակերտութիւն նորագիւտ վարդապետութեանն խմբէին ուսուցանել և թեքել» (Կորիւն, ԺԲ, 58)։

Բերված բոլոր օրինակներում ֆիզիկական գործունեության իմաստ ունեցող բայերի համար որպես օբյեկտ հանդես են եկել անվանական խոսքի մասով արտահայտված առարկաներ (անձ և իր)։

Ժամանակակից հայերենում ևս կարելի է ասել մարել շորերը, կոտրել ապակին, արբնացնել ինձին, բռնել վազողին և այլն, բայց երբեք չի կարելի այդ բայերի կողքին որպես ուղիղ խնդիր գործածել որևէ անորոշ դերբայ։

Ինչ վերաբերում է հոգեկան գործունեություն արտահայտող բայերին. ապա խնդրառական հիշյալ հատկանիշի տեսակետից նրանք բաժանվում են երեք խմբի

ա) Հոգեկան գործունեություն արտահայտող բայեր, որոնց համար որպես ուղիղ խնդիր կարող են հանդես գալ ոչ միայն անվանական խոսքի մասերը և ենթակայական, հարակատար դերբայներն ու բայանունները՝ անվանական խոսքի մասի կիրառությամբ, այլև անորոշ դերբայը՝ գործողության և եղելության ընդհանուր գաղափարի նշանակությամբ.

օրինակ՝

Կամէր հանել զմիտս թագաւորին (Բուզ., 4-րդ, Ե, 90)։

Գնել թագաւորել կամի և զքեզ սպանանել... և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա» (Բուզ., 4-րդ, ԺԵ, 116)։

«...Ստես մեծ Վարդան զերկապատկութիւն աշխարհին իւրոյ...» (Եղիշէ, 99)։ «...Դուք իսկ տեսանէք զշարշարանս սուրբ առաքելոցն զսպանմունս զամենայն սուրբ մարտիրոսացն» (Եղիշէ, 113)։

Վկայված օրինակներում հոգեկան գործունեություն արտահայտող կամիմ և տեսանեմ բայերի ուղիղ խնդիրները արտահայտվել են և՛ գոյականով, և՛ բայանվամբ, և՛ անորոշ դերբայով։

Նույն ձևով ժամանակակից հայերենով ասվում է՝ տեսա նրան, տեսա նրա գալը, հիշեցի ընկերոջս, հիշեցի ընկերոջս երգելը և այլն։

բ) Հոգեկան գործունեության բայեր, որոնց համար որպես գործողության անմիջական օբյեկտ կարող է ծառայել միայն անորոշ դերբայով արտահայտված գործողության ու եղելության ընդհանուր գաղափարը. օրինակ՝ «...Եւ օդոցն որամաեաց քաղցրութեան հացին կերակրոյ ի վերուստ ցօղել» (Բուզ., 4-րդ, Զ, 91)։ «...Հրամայէր ածել զառաջեաւ զերամակս փղացն»։

Ժամանակակից հայերենում ևս մի շարք բայերի (հրամայել, կարգադրել, ջանալ) ուղիղ խնդիրները սովորաբար դրվում են միայն անորոշ դերբայով. օրինակ՝ հրամայեց գնալ, կարգադրեց մոտենալ, ջանում էր հասնել առաջավորներին և այլն։

գ) Հոգեկան գործունեության բայեր, որոնց մոտ հին հայերենում միայն անորոշ դերբայն է, որպես անմիջական օբյեկտ, դրվում հայցական հոլովով, իսկ այդ բայերի համար ուղիղ խնդրի նշանակությամբ հանդես եկող անվանական խոսքի մասերը դրվում են կամ տրական կամ նախդրիվ հոլովներով։ Այդպիսի բայերը գրաբարի քերականների կողմից դասվում են չեզոք սեռի բայերի շարքը. համեմատիր՝

ցանկայ չարեաց, ցանկամ նմա, ցանկամ բարւոյն, բայց՝ ցանկամ երթալ, ցանկամ ընթեռնուլ և այլն։

Ժամանակակից հայերենում ցանկանալ բայը որոշակիորեն կայունացրել է իր ուղիղ խնդրի հոլովառությունը. այդ բայի՝ և՛ անորոշ դերբայով, և՛ անվանական խոսքի մասով արտահայտված ուղիղ խնդիրները դրվում են հայցական հոլովով (հմմտ. գիրք եմ ցանկանում, ցանկանում եմ կարդալ)։ Սակայն նկատելի է, որ այդ բայի մոտ գերակշռում է անորոշ դերբայով արտահայտված ուղիղ խնդրի կիրառությունը։

Ինչպես տեսանք, հոգեկան գործունեության նշանակություն ունեցող բայերը հանդես են բերում որոշ տարբերություններ, սակայն այդ բոլոր բայերին էլ բնորոշ է այն հանգամանքը, որ նրանք, ի տարբերություն ֆիզիկական գործունեություն նշանակող բայերի, կարող են ունենալ անորոշ դերբայով արտահայտված ուղիղ խնդիրներ։

Հոգեկան ու մտավոր, ինչպես և ֆիզիկական գործունեություն նշանակող բայերը, որպես խնդրառու բառեր, իրենց խնդրառական սույն հատկանիշով հանդես են գալիս նաև բարդ ստորադասական նախադասության մեջ։ Հենց այդ պատճառով է, որ շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը իր օբյեկտային ընդհանուր նշանակությամբ միշտ համարժեք է անորոշ դերբայի իմաստին՝ գործողության կամ եղելության գաղափարին, իսկ հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը այդ տեսակետից համարժեք է առարկայական իմաստ արտահայտող որևէ դերբայի (հարակատար, ենթակայական) նշանակությանը։

Բարդ ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս մասերի միջև եղած գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերությունը, այդ հարաբերության երկու եզրերի իմաստների տեսակետից միաժամանակ քննության առնելիս ստանում ենք հետևյալ պատկերը.

ա) Հոգեկան գործունեության հարաբերումը մի այլ գործողության կամ վիճակի—շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն։

բ) Հոգեկան գործունեության հարաբերումը առարկայի—հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն։

գ) Ֆիզիկական գործունեության հարաբերումը առարկայի—հարաբերական ուղիղ խնդիր. երկրորդական նախադասություն։

դ) Ֆիզիկական գործունեության հարաբերումը մի այլ գործողության կամ վիճակի—իրականում գոյություն չունի։

Կասկածից վեր է, որ ուղիղ խնդիրների տարբերությունները գործողության և օբյեկտի հարաբերության տեսակետից պայմանավորված են իրենց խնդրառու բայերի միջև ներգործող հատկանիշի աստիճանի տարբերություններով։ Խնդրառու բայի ներգործության աստիճանը իր հերթին կախված է այդ բայի իմաստից։ Հոգեկան ու մտավոր գործունեություն արտահայտող բայերի ուղիղ խնդիրները հանդես են գալիս սոսկ որպես գործողության օբյեկտներ՝ առանց քիչ թե շատ ներգործվելու կամ փոփոխություն կրելու այդ գործողության կողմից, այնինչ՝ ֆիզիկական գործունեության օբյեկտը ներգործվում, հաճախ նույնիսկ փոփոխության է ենթարկվում, կամ ստեղծվում է որպես գործողության հետևանք։

Այստեղից էլ շաղկապավոր և հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների մի այլ էական տարբերությունը. շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները ցույց են տալիս միայն գլխավոր նախադասության ենթակայի գործողության համար սոսկ որպես օբյեկտ հանդես եկող մի գործողություն կամ վիճակ, որը քիչ թե շատ փոփոխություն չի կրում ենթակայի գործողությունից, իսկ հարաբերական ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները կարող են ցույց տալ նաև որպես օբյեկտ հանդես եկող այնպիսի առարկաներ (երբ նրանց խնդրառու բայը ֆիզիկական գործունեության նշանակություն ունի), որոնք գտնվում են գլխավոր նախադասության ենթակայի գործողության ազդեցության ոլորտում։

Այսպիսով, բարդ ստորադասական նախադասության գերադաս և ստորադաս մասերի միջև գոյություն ունեցող գործողության և օբյեկտի շարահյուսական հարաբերությունը միատարր չէ, նրա ներսում գոյություն ունեն զգալի տարբերություններ։ Այդ տարբերությունների դրսևորման համար որպես քերականական միջոց են ծառայում ստորադասական շաղկապների և հարաբերական բառերի լեքսիկական ու կիրառական նշանակությունների առանձնահատկությունները, մի հանգամանք, որը հանգեցնում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքային երկու հիմնական ենթատեսակների առկայության։

---

1 Գուրգեն Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, 1951, էջ 31—32։